

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԳՈՒՐ ԳՈՒՐԳԵՆԻ

ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՀՀ ՌԵԳԻՈՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԻԴ.03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ
աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Արամայիս Ռոստոմի Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ.

աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Մաքսիմ Գառնիկի Մանասյան

աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Մարինե Ռաֆիկի Մաթոսյան

Առաջատար կազմակերպություն՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 6-ին, ժամը 14³⁰-ին,
ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի «Երկրագիտության» 005 մասնագիտական խորհրդում,
հասցեն՝ 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

երկրաբ.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Մարատ Արիսի Գրիգորյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը XX դարի վերջում պետական տնտեսվարման ու կարգավորման համակարգից անցում կատարեց շուկայական ազատականացման և ինքնակարգավորման տնտեսական համակարգ: Պետական ամբողջատիրական կառավարման մի ծայրահեղությունից անցում կատարելով ազատ շուկայական ինքնակառավարման մյուս ծայրահեղություն, Հայաստանի բավականին կայացած տնտեսությունը զրկվեց նախկին կենտրոնական ֆինանսավորումից, երաշխավորված ռեսուրսային և ապրանքային շուկայից, հայտնվեց արդեն իսկ ձևավորված ու ազատ մրցակցային նոր շուկա ներառվելու բավականին դժվարալուծ խնդրի առջև:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ և՛ պետական, և՛ շուկայական տնտեսվարման համակարգերը ծայրահեղական են, նախընտրելի է պետություն-շուկա զուգընտրանքը՝ խառը տիպի տնտեսվարումը, որում համակցվում են շուկայական ինքնակարգավորումը և պետական կարգավորումը: Դրանց արդյունավետ համագործակցությունը հասարակության և պետության համար ապահովում է հնարավորինս առանց ցնցումների զարգացում: Նման պայմաններում, բնականաբար, շուկայական ինքնակարգավորման քաղաքակիրթ միջավայր ստեղծող տնտեսական ճիշտ քաղաքականությունը տնտեսության զարգացման և տնտեսական ակտիվության բարձրացման ծանրակշիռ գործոն է դառնում:

Այսօր նորանկախ ՀՀ կանգնած է շուկայական ազատ մրցակցային հարաբերությունների հենքի վրա, գիտականորեն հիմնավորված տնտեսական քաղաքականության մշակման և տնտեսվարման նոր համակարգի ստեղծման անհետաձգելի խնդրի առջև: Վերջինիս լուծման համար արդիական է համարվում պատմական փորձաքննություն անցած և աշխարհի, մասնավորապես Եվրոպայի, մի շարք զարգացած երկրների տնտեսական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում դրված աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական դրույթների ընդհանրացումը և ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում դրանց կիրառման առանձնահատկությունների ու հնարավորությունների բացահայտումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է հիմնավորել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրույթների և սկզբունքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացներում:

Նպատակի իրականացման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հիմնավորել ռեգիոնալ զարգացման տեսությունների համակարգում աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի նախապատվությունը,
- տալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրսևորման աշխարհագրական առանձնահատկությունները,
- ցույց տալ հայեցակարգի հիման վրա կառուցված տնտեսության պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության առանձնահատկությունները, դրսևորման տարբերությունները,
- հիմք ընդունելով աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը, ստեղծել տնտեսության ռեգիոնալ ռաումնասիրության և կազմակերպման մոդել,
- կիրառել աճի բևեռներ և կենտրոններ մոդելը ՀՀ տնտեսության տարածագործառության կազմակերպման և զարգացման ռազմավարական ուղղությունների կանխորոշման համար: Ըստ այդմ.

➤ բացահայտել ՀՀ «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունները,

- բացահայտել ՀՀ «զարգացման բևեռների» գործառույթային և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները,
- առաջարկություններ անել ՀՀ տնտեսության տարածագործառույթային կազմակերպման բարեփոխումների ուղղությամբ:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգն է, առարկան՝ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսամեթոդական վերլուծությունն է և վերջինիս կիրառական նշանակության բացահայտումը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացներում:

Հեղազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Առաջադրված խնդիրների լուծման համար տեսամեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտության և սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսության, ռեգիոնալ տնտեսական զարգացման և տարածքային կազմակերպման, ռեգիոնալ քաղաքականության տեսության վերաբերյալ դասականների աշխատությունները, հայրենական ու արտասահմանյան հետազոտողների աշխատանքները, ՀՀ տնտեսության զարգացման ծրագրային փաստաթղթերն ու հայեցակարգերը:

Աշխատանքի կատարման համար տեղեկատվական հիմք են համարվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներում առկա համապատասխան նյութերը, Համաշխարհային բանկի և միջազգային տարբեր կազմակերպությունների տեղեկագրերը, փորձագիտական գնահատումները, ՀՀ էկոնոմիկայի և Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների պաշտոնական տվյալները:

Աշխատանքում կիրառվել են վերլուծության և համադրության, արտարկման, մակաձուլության և արտաձման, համեմատաաշխարհագրական, վիճակագրական, պատկերանշանային մոդելավորման (հատկապես՝ մաթեմատիկա-աշխարհագրական, քարտեզագրական), գրաֆիկների, աշխարհատեղեկատվական քարտեզագրման և այլ մեթոդներ:

Հեղազոտության պաշտպանվող հիմնադրույթները:

1. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը շուկայական տնտեսության զարգացման համար ապահովում է գիտատեսական հիմք, ունի կիրառական նշանակություն ռեգիոնալ զարգացման ու տնտեսության տարածագործառույթային կազմակերպման գործում:
2. Երկրների տնտեսական զարգացման գործընթացում պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում նախընտրելի է աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի կիրառությունը:
3. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունն ունի առանձնահատկություններ և դրսևորման տարբերություններ զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:
4. ՀՀ տնտեսության ժամանակակից զարգացման գործընթացներում տարածքային և գործառույթային բարեփոխումների իրականացման համար գիտատեսական հիմք կարող է հանդիսանալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը:

Հեղազոտության գիտական նորույթը: Առենախտությունը ՀՀ տնտեսության զարգացման և տարածագործառույթային կազմակերպման համալիր հետազոտություն է՝ հիմքում ունենալով աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքները:

Աշխատանքի գիտական նորույթներն են.

1. ընդհանրացվել են աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տարբեր մոտեցումները և առաջարկվել կիրառման սկզբունքներ,
2. բացահայտվել են աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիման վրա կառուցված տնտեսության պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության առանձնա-

հատկությունները և դրսևորման տարբերությունները զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում,

3. աշխարհատեղեկատվական համակարգերի օգտագործմամբ, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիման վրա, մշակվել է տնտեսության տարածագործառնության ուսումնասիրության և կազմակերպման մոդել,
4. առաջին անգամ ՀՀ-ում կիրառվել է տնտեսության տարածագործառնության ուսումնասիրման և կազմակերպման մոդելը, առաջարկվել՝ տնտեսության ռեգիոնալ զարգացման և կատարելագործման նպատակային ուղիներ:

Հեղազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ռազմավարական ծրագրերի մշակման աշխատանքներում:

Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթները և արդյունքները զեկուցվել և տպագրվել են միջազգային և հանրապետական նշանակության գիտաժողովներում.

- «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը», հանրապետական գիտաժողով, Երևան, 2011,
- “Modern problems of geography” proceedings of the conference: Dedicated to the 80th Anniversary Since the Foundation of Vakhushiti Bagrationi Institute of Geography, Tbilisi, 2013,
- «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», հանրապետական գիտաժողով, Երևան, 2015:

Աշխատանքի տեսական ընդհանրացումները և եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի սեմինարներում, ֆակուլտետի գիտխորհրդում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական ինը հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից (150 անուն), հավելվածից: Ատենախոսությունը բաղկացած է 144 էջից, ընդգրկում է 12 աղյուսակ, 17 քարտեզ, որից 11-ը ԱՏՀ կիրառմամբ ստացված վերլուծական քարտեզներ են:

Երախտագիտություն: Խորին երախտագիտություն են հայտնում ատենախոսության գիտական ղեկավար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ավագյանին՝ խնդրի դրվածքի, օգտակար խորհուրդների, աշխատանքի նկատմամբ մշտական ուշադրության և առաջարկությունների համար: Շնորհակալություն են հայտնում ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ աշխատանքի ընթացքում օգտակար խորհուրդների համար:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 1. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ռեգիոնալ զարգացման և տարածագործառնության կազմակերպման տեսությունների համակարգում առկա են բազմաթիվ տեսություններ, հայեցակարգեր, մոդելներ, որոնցում իր ուրույն տեղն ունի նաև աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը: Ծանոթանալով և վեր-

լուծելով հրապարակում եղած տեսական դաշտը՝ բացահայտել ենք, որ դրանք բոլորն էլ ունեն արդիական հնչեղություն, սակայն լուծում են որոշակի ժամանակաշրջանին կամ տարածաշրջաններին բնորոշ խնդիրներ և կամ էլ շոշափում զարգացման ընդհանուր գործընթացի մասնավոր հատվածներ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգման. ներկա գլոբալիզացման ու ինտեգրացման, ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում առաջնային կարևորություն է ստանում ազգային մրցունակ տնտեսությունների ստեղծման խնդիրը, որի իրականացման համար էլ, ըստ մեր դիտարկումների, անհրաժեշտ են.

- **Մրցակցային առավելությունների դաշտ.** բնական, մարդկային, տնտեսական ռեսուրսներ, ներդրումների երաշխավորություն, քաղաքական կայունություն, վարչական հարցերի լուծման պարզություն և այլն, որոնք ազգային տնտեսությունների զարգացման համար ստեղծում են բարենպաստ կամ անբարենպաստ միջավայր:

- **Մրցակցային առավելությամբ արտադրություններ՝** որպես գործառույթային հենք, «զարգացման բևեռներ», տնտեսական միջուկներ: Այս հենքի վրա կառուցվում է երկրի ողջ տնտեսությունը, իսկ վերջիններիս զարգացմամբ, բազմապատկիչ արդյունքի շնորհիվ, ապահովվում է երկրի ազգային տնտեսության զարգացումը:

- **Մրցակցային առավելությամբ փորածքներ՝** որպես տարածական հենք, «աճի կենտրոններ»: Ստեղծված առաջատար կենտրոնների ցանցը «կենտրոն-ձայրամաս», «նորամուծությունների տարածման», «ազլումերացիոն արդյունքի» օրենքների արդյունքում, իր ազդեցության դաշտում ընդգրկում է երկրի ողջ տարածքը, դրանով իսկ, ապահովելով մեզոմակարդակում՝ համաչափ զարգացում, մակրոմակարդակում՝ մրցակցություն:

Վերոհիշյալ երեք բաղադրիչների համալիր գնահատումն ու գիտական կազմակերպումը էապես կարևոր է ազգային մրցունակ տնտեսությունների ստեղծման համար: Եթե առաջին բաղադրիչը՝ մրցակցային առավելությունների դաշտը, որոշում է ազգային տնտեսության զարգացման նախադրյալներն ու հնարավորությունները, ապա երկրորդ և երրորդ բաղադրիչներն որոշում են տնտեսության, մի դեպքում՝ տարածքային և մյուս դեպքում՝ գործառույթային կազմակերպման առանձնահատկությունները, որոնք ոչ պակաս կարևոր են երկրի մրցունակության գործընթացում: Իսկ մրցակցային առավելությունների երկրորդ և երրորդ բաղադրիչները դրված են **աճի բևեռներ և կենտրոններ** հայեցակարգի հիմքում, որոնք, միանշանակորեն, հենվում են երկրի ռեսուրսային ներուժի և հնարավորությունների վրա:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի գիտական սկզբունքները մշակվել են անցյալ դարի սկզբներին Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում և, սովորաբար, կապում են ֆրանսիացի տնտեսագետ Ֆր. Պերուի «աճի բևեռներ» հայեցակարգի հետ: Պերուի «աճի բևեռներ» հայեցակարգի նման այլ հայեցակարգեր մշակվել են Գոմնար Մյուրդալի և Ալբերտ Հիրչմանի կողմից, իսկ տարածական տարբերակը՝ Ֆր. Պերուի աշակերտ՝ Ժ. Բուդվիլի կողմից: Ժ. Բուդվիլին իրավամբ համարում են այդ հայեցակարգի համահեղինակ: Հայեցակարգի տեսական սկզբունքները հետագայում լրացվել են Պ. Պոտյեի՝ առանցքների տեսությամբ, Իս. Բ. Լասուենի, Լ. Կեսեգի՝ (Հունգարիա), Վ. Կավալեցի (Լեհաստան), Կ. Միխայլովիչի (Հարավսլավիա) և այլնի աշխատություններով:

Որքան էլ ուսումնասիրությունները բազմակողմանի են, իսկ հայեցակարգի տեսական սկզբունքների իրականացման պատմական փորձի հաջողված և ձախողված օրինակները շատ, այնուհանդերձ, բոլոր այս արժեքավոր լրացումների ընդհանրացում կատարված չէ և հայեցակարգի գործնական կիրառման խնդրում դեռևս ծնվում են վիճելի ու հակասական մոտեցումներ: Այդ իսկ պատճառով, առաջին գլխում մենք տվել ենք հետևյալ խնդիրների լուծումները.

1. կատարել ենք հայեցակարգի տեսական սկզբունքների ընդհանրացում;
2. հայեցակարգը դիտել ենք հասարակության տարածքային կազմակերպման օրենքների ու օրինաչափությունների շրջանակներում (որոնք մեր կողմից ևս ընդհանրացվել են), և պարզել հասարակության, մասնավորապես տնտեսության, զարգացման օրինաչափությունները, վերջիններիս հետ հայեցակարգի համահունչությունն ու դրսևորման առանձնահատկությունները:

Հայեցակարգի տեսական սկզբունքների ընդհանրացում. Ֆրանսուա Պերուն տվել է աճի բևեռ հայեցակարգի շատ պարզ սահմանում. «դա օբյեկտ է, որն ընդունակ է նպաստել այլ օբյեկտների աճին»:

Ներկա մեկնաբանմամբ, ըստ աշխարհագրական հանրագիտարանային բառարանի, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը բացատրում է տնտեսության տարածագործառության կազմակերպման գործընթացը: Ըստ այս հայեցակարգի, տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության զարգացումը հավասարապես չի ընթանում, մշտապես կարելի է առանձնացնել դինամիկ (այսպես կոչված զարկերակային) ճյուղեր: Այդ ճյուղերը, հանդիսանալով ողջ տնտեսության զարգացման շարժիչը, իրենցից ներկայացնում են «զարգացման բևեռներ»: Արտադրության կենտրոնացման գործընթացը զարկերակային ճյուղերը կենտրոնացնում է որոշակի վայրերում (շրջաններում)՝ «աճի կենտրոններում»:

Կատարելով վերոհիշյալ մեկնաբանության որոշակի հստակեցումներ և պարզաբանումներ, մենք հանգել ենք հետևյալ եզրահանգման, որ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի համալիր ու գիտական հետազոտության համար անհրաժեշտ է.

1. «Զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» համատեղ ուսումնասիրություն, սինթեզ՝ չտարանջատելով և չկարևորելով դրանցից մեկը:
2. Որպես «զարգացման բևեռներ» դիտարկել ոչ միայն արդյունաբերության ճյուղերը, ինչպես առաջարկում են տեսության հեղինակները, այլ նաև տնտեսության ոչ նյութական ոլորտի ու սոցիալական, վարչական բաղադրիչները ևս:
3. Կատարել բազմամակարդակ ուսումնասիրություն: Դրա համար հարկավոր է «աճի կենտրոններում» տարբերակել մայրաքաղաք, խոշորագույն ռեգիոնալ կենտրոն, տարածաշրջանային կենտրոն, տեղական կենտրոն մակարդակներ և մրցունակ և ոչ մրցունակ տարածքներ, «զարգացման բևեռներում» տարբերակել հանրապետական, մարզային, տեղական մրցունակ բևեռներ, և, գերակայող-դեկավար (բազմապատկիչ արդյունքով օժտված), լրացնող ու սպասարկող (ծախս-թողարկում հարաբերության) ճյուղեր:
4. Կարևորել ենթակառուցվածքների միասնական ցանցի ստեղծումը: «Աճի կենտրոնների» ձևավորման, զարգացման, ազդեցության դաշտի աշխարհագրական ընդարձակման ու ինտենսիվության մեծացման գործընթացում կարևորել ճանապարհային և սոցիալ-արտադրական ենթակառուցվածքների միասնական ցանցի ստեղծումը, իսկ «զարգացման բևեռների» բազմապատկիչ արդյունքի մեծացման գործընթացում կարևորել հումքա-էներգետիկ, սպասարկող, օժանդակ արտադրական կապերի ստեղծումը:
5. Հայեցակարգը դիտել հասարակության զարգացման և տարածքային կազմակերպման փուլավիճակային զարգացման օրինաչափությունների շրջանակներում, որը հնարավորություն է ընձեռում, զարգացման հաջորդականությունից ու օրենքներից ելնելով, անել կանխատեսումներ:

Քննարկելով հայեցակարգի առանձնահատկությունները տվել ենք մեր սահմանումը:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ռեգիոնալ տնտեսության զարգացման հայեցակարգ է, որում «զարգացման բևեռները»՝ ռեգիոնալ զարգացման գործառության գերակա ճյուղերը, բազմապատկիչի արդյունքի շնորհիվ, իսկ «աճի կենտրոնները»՝ փարաբնա-

կեցման համակարգի կենտրոնական տեղերը, «կենտրոն-ծայրամաս» փոխհարաբերության և դիֆուզիոն փարածման արդյունքում ապահովում են երկրի զարգացում և տարածքային ու գործառնության օպտիմալ կազմակերպում: Դրանով իսկ իրականացվում է փարածքի ներուժի լիարժեք օգտագործում, համաշխարհային շուկայում մրցունակության ապահովում և սուր բևեռացված զարգացման մեղմացում:

Հայեցակարգը և հասարակության փարածքային կազմակերպման օրենքներն ու օրինաչափությունները (ՀՏԿՕՕ). ՀՏԿՕՕ-ի հիման վրա լուսաբանվում են հայեցակարգի երկու կարևոր բաղադրիչների՝ «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների», և ընդհանրապես տարածքի փուլաէվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունները:

Պարզվում է, որ «աճի կենտրոններն» իրենց ձևավորման վաղ փուլերում, երբ գերակայում են կենտրոնացման գործընթացները և ձևավորվում են շրջակա տարածքների էներգետիկ, նյութական և ինֆորմացիոն ռեսուրսների կլանման արդյունքում, հարակից տարածքների վրա դրսևորում են բևեռացման բացասական ազդեցություն: Տարաբնակեցման զարգացման ավելի ուշ փուլերում, երբ կենտրոնացման գործընթացներին զուգահեռ հանդես են գալիս նաև ապակենտրոնացման գործընթացները, մեծանում է հարակից տարածքների վրա «աճի կենտրոնների» դրական ազդեցությունը:

Ընդհանրացվում է, որ «զարգացման բևեռները» որպես գործառնության հենք, ունեն հետևյալ առանձնահատկությունները՝ 1. պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ են տնտեսության որոշակի ճյուղեր, 2. տարածքի զարգացման տարբեր փուլերին համապատասխանում է տնտեսության ճյուղային տարբեր կառուցվածք և դրանց հարաբերակցություն, 3. «աճի կենտրոններում» նորամուծությունների կենտրոնացմանը զուգընթաց տեղի է ունենում «հնացած արտադրությունների» դիֆուզիա կիսաձայրամաս, ապա ձայրամաս:

Զարգացման այս ընդհանրացումները հնարավորություն են ընձեռում մեզ, կանխավ իմանալով փուլաէվոլյուցիոն զարգացման միտումները, կողմնորոշվել տնտեսության տարածագործառնության կազմակերպման գործընթացում:

ԳԼՈՒԽ 2. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ գլխում մեկնարկվել են հետևյալ խնդիրները.

1. Ռեգիոնալ տնտեսական քաղաքականության դերը տնտեսական զարգացման գործընթացում. դրանց տեսական հիմնավորումները.
2. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն և տարածքային տարբերությունները.

Ռեգիոնալ տնտեսական քաղաքականության դերը տնտեսական զարգացման գործընթացում. Տեսական հիմնավորումները. Այսօր ազգային տնտեսությունները ներառվում են տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման համաշխարհային մրցակցության ազատ շուկայական դաշտ, որի արդյունքում յուրաքանչյուր երկրի առջև բացվում են ոչ միայն նոր հնարավորություններ ու հեռանկարներ, այլ նաև հնարավոր վտանգներ: Այդ իսկ պատճառով, տնտեսական զարգացման գործընթացում մեծապես կարևորվում է պետական կառավարման և ռեգիոնալ տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունը:

Տնտեսական քաղաքականությունը, սակայն, պետք է խարսխվի տեսական հիմնավորումների վրա: Տնտեսության զարգացման տարբեր փուլերում առաջ քաշված տեսական հիմնավորումներն որոշակիորեն լուծել են տվյալ ժամանակաշրջանի առկա հիմնախնդիրները:

Մեր օրերում երկրների տնտեսական զարգացումը խթանելու համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ և տեսական հիմնավորումներ:

Ռեգիոնալ զարգացման կարգավորման գործընթացներ սկսել են իրականացվել դեռևս XIX դարի կեսերին, սակայն այն զանգվածային բնույթ է ստացել միայն XX դարում: Ռեգիոնալ քաղաքականության վաղ փուլում նրա տեսական դրույթներում դրվել են **քեյնսյան** և **նեոկլասիկ** մոտեցումները, 50-ական թթ.՝ **կոմունյալիզմ** մոտեցումները, ներկայումս լայն տարածում ունեն **մրցակցային առավելությունների** մոտեցումները:

Վերոհիշյալ բոլոր մոտեցումների ընդհանրացման արդյունքում եզրակացնում ենք, որ երկրի պետական տնտեսական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում անհրաժեշտ է դնել ներքոհիշյալ խնդիրները: Թեպետ հայեցակարգերի սինթեզին, ռեգիոնալ քաղաքականության առաջարկվող խնդիրները կառուցվել են աճի բևեռներ և կենտրոններ հայցակարգի տեսական դրույթների հաշվառմամբ: Խնդիրներն են.

- երկրում տնտեսության զարգացման համար մրցակցային դաշտի և ներդրումային բարենպաստ կլիմայի ստեղծում,
- գերակա արտադրությունների կամ ճյուղերի՝ «զարգացման բևեռների» ընտրություն և զարգացման խթանում,
- արտահանման ուղղվածությամբ արտադրությունների ստեղծում,
- գերակա և արտահանվող արտադրությունների զարգացման խթանման և երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերածնակարման և բարելավման միջոցառումների իրականացում,
- փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման խթանում,
- կլաստերների ստեղծում՝ որպես ճյուղային մրցակցային առավելության խթանում,
- գիտատար, ինովացիոն արտադրությունների զարգացման խթանում,
- «աճի կենտրոնների» տարբերակում և դրանց զարգացման խթանում,
- ազատ տնտեսական գոտիների, տեխնոպարկերի ստեղծում՝ որպես տարածքային և ճյուղային մրցակցային առավելության խթանում,
- ենթակառուցվածքի՝ որպես հորիզոնական կապերի, զարգացում,
- արտադրական համալիրների՝ որպես արտադրության ուղղահայաց կապերի և համալիր տնտեսության զարգացում:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն և փարածքային փարբերությունները. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքներն իրենց հիմքում ունեցող ռեգիոնալ տնտեսական քաղաքականության էությունը նրանումն է, որ եթե ռեգիոնի համաչափ զարգացման մոտեցման դեպքում տարբերակվում, տիպաբանվում են ռեգիոնները, դրանցից յուրաքանչյուրում բացահայտվում ռեգիոնալ և ազգային հիմնախնդիրները, մշակվում դրանց հաղթահարման ուղիներ և աջակցություն ցուցաբերվում ճգնաժամային ու թույլ զարգացած ռեգիոններին, ապա աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի վրա կառուցված տնտեսական քաղաքականությունը երկրի մրցունակության և զարգացման տարածքային տարբերությունների համահարթման խնդիրների լուծման համար առաջարկում է ազգային տնտեսության ճյուղային և տարածքային առավելությունների բացահայտում՝ «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» հիմնավորված տարբերակում և, որպես հենակետային սյուներ, դրանց զարգացման խթանում և կառուցողական լուծումների իրականացում, որոնք իրենց զարգացմամբ, ավելի ուշ փուլերում, արդեն իներցիոն ձևով, կարող են նպաստել երկրի ողջ տնտեսական զարգացմանը և տարածքի զարգացման մակարդակների տարբերությունների մեղմացմանը:

Ըստ էության **աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ քաղաքականության համար կարևորվում է գործառույթային հենքի՝ «գարգացման բևեռների» և փարածքային հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծումը և դրանց փարբերակված աջակցությունը:**

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունում կարևորվում են հետևյալ առանձնահատկությունները.

Առաջին. «աճի կենտրոնների» ընտրության առանձնահատկությունն է: Ելնելով հայեցակարգի բևեռային զարգացման մոտեցումից, մասնագետների մի խումբ հայեցակարգի սկզբունքներում հասկանում է աջակցություն մրցակցային կենտրոններին, իսկ հետամնաց տարածքների զարգացումը ընկալում որպես առաջատարների զարգացման հետագա տարածում: Մասնագետների մի այլ խումբ էլ հայեցակարգի սկզբունքներում հասկանում է հետամնաց շրջաններում աճի կենտրոնների ստեղծում և վերջիններիս զարգացմամբ տարածքի հետամնացության հաղթահարում: Սակայն, հայեցակարգի հետագա կատարելագործման և պատմական գործնական կիրառման արդյունքների վերլուծությունների արդյունքում, այսօր հայեցակարգը միավորում է վերոհիշյալ երկու մոտեցումները և «աճի կենտրոնները» դիտում որպես տարաբնակեցման, տարածական կառուցվածքի հենքեր, որոնք իրենց ազդեցության դաշտում կրնդգրկեն երկրի ողջ տարածքը, անկախ նրանից գտնվում են մրցունակ թե՛ հետամնաց տարածքում և կլուծեն երկրի թե՛ մրցունակության և թե՛ տարածքի հավասարաչափ զարգացման խնդիրները:

Երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ աջակցություններ տրվում են ոչ թե դրա անհրաժեշտությունն ունեցող ռեգիոններին, այլ առանձին օջախներին՝ կենտրոններին, որոնց վրա հենվում է ռեգիոնի հետագա զարգացումը: Այս մոդելի կիրառման դեպքում կրոճատվում են աջակցության ենթակա տարածքները. իսկ աջակցության կենտրոններ կարող են հանդես գալ ինչպես առանձին բնակավայրերը, այնպես էլ նրա առանձին հատվածները: Այս հայեցակարգի տեսական դրույթների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության դեպքում առավել հեշտ է կողմնորոշվել ռեգիոնալ ծրագրերի մշտապես աճող համակարգում և ճիշտ ուղղորդել մշտապես սահմանափակ ֆինանսական օգնությունը:

Երրորդ առանձնահատկությունն էլ «զարգացման բևեռների» գործառույթային տարբերակումներն են: Զարգացած կենտրոններում նպատակահարմար է, նորամուծության դիֆուզիայի օրենքներին համարժեք, նորագույն ճյուղերի զարգացման խթանումը և հնացած արտադրությունների սահմանափակումները, դրանց արտամղումը կիսաճայրամաս կամ ծայրամաս, իսկ հիմնախնդրային շրջաններում՝ նոր կամ ավանդական ճյուղերի զարգացումը:

Չորրորդ առանձնահատկությունը «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» մասշտաբային տարբերություններն են: Այսպես, «զարգացման բևեռները» կարող են լինել մասնագիտացման ճյուղերից մինչև տեղական նշանակության արտադրություններ, իսկ «աճի կենտրոնները»՝ միջազգային մրցունակության կենտրոններից մինչև տեղական նշանակության կենտրոններ:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքներն իրենց հիմքում ունեցող ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունն ունի տարածաշրջանային կիրառման տարբերություններ ու առանձնահատկություններ՝ պայմանավորված երկրի պոտենցիալ հնարավորություններից, զարգացման մակարդակից և համաշխարհային կենտրոն-ճայրամաս փոխհարաբերություններում գրաված դիրքից: Տարբերակել ենք հետևյալ առանձնահատկությունները.

- I. դա երկրների մրցունակության ապահովման և տարածքի համաչափ ու համալիր զարգացման խնդիրների լուծման համամասնության տարբերությունն են,
- II. դա «զարգացման բևեռների» ընտրության տարբերություններն են,
- III. դա «աճի կենտրոնների» որակական տարբերություններն են,
- IV. դա երկրների տեղական առանձնահատկություններն են. աշխարհագրական դիրքի, բնառեստրոսային, պատմական, ժողովրդագրական, մշակութային, քաղաքական, կառավարման գործոնների, արտաքին և ներքին զարգացման հնարավորությունների ամբողջությունը, որոնք երկիրը դարձնում են ինքնատիպ ու անկրկնելի:

Այս հայեցակարգի հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը, գիտական մոտեցման դեպքում, լիովին հնարավորություն է ընձեռում ապահովել ցանկալի դրական լուծումներ ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում: Այնինչ ՀՀ տնտեսական քաղաքականությունն այսօր կրում է օպերատիվ իրավիճակային բնույթ: Անցած տարիների տնտեսական քաղաքականությունը մեծապես հրամցվել է միջազգային կազմակերպությունների կողմից՝ իրականացվող ծրագրերի տրամաբանությամբ: Այսօր օրակարգային խնդիր է տնտեսական կառավարման և ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկարաժամկետ ռազմավարության մշակումը և տեսական հիմքի ընտրությունը:

ԳԼՈՒԽ 3. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Երրորդ գլխում մեկնարկվել են հետևյալ խնդիրները.

1. Ընդհանրացվել են «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» առանձնահատկությունները. Վերջիններիս պարզաբանումները մեզ համար գիտական նախահող են պատրաստում կանխատեսումների և գործնական կիրառումների համար:

2. Մշակվել է «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» ուսումնասիրության աշխարհագրական մոդել: Հայեցակարգը կարևոր արժեք է ձեռք բերում, երբ այն ստանում է գործնական կիրառություն: Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը կարևորվում է նրանով, որ այն նախ, տեսական հիմք է ապահովում ռեգիոնալ տնտեսական քաղաքականության համար, որի մասին խոսվել է նախորդ գլխում, և ապա, տեսական հիմք է ապահովում ազգային տնտեսության համալիր ու գիտական ուսումնասիրության, տնտեսության ճյուղային և տարածքային հիմնավորված կազմակերպման համար:

Այդ իսկ պատճառով, այս գլխում կարևորվել է աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների, հասարակության զարգացման օրենքների և օրինաչափությունների, «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» առանձնահատկությունների և փուլափոյուցիոն զարգացման հաջորդականությունների ընդհանրացմամբ, ուսումնասիրության աշխարհագրական մոդելի մշակումը և տեսությունից գործնական կիրառության անցումը: Մոդելավորումն ակնկալում է ԱՏՀ-երի (աշխարհագրական տեղեկատվական համակարգերի) կիրառում, որը հնարավորություն է ընձեռում ստեղծել տեղեկատվական հզոր բազա, կատարել բարդ հաշվողական վերլուծություններ և որակական գնահատումներ:

Աշխարհագրական ուսումնասիրության մոդելը ընդգրկում է մի քանի հաջորդական փուլեր: Յուրաքանչյուր փուլ ակնկալում է ուսումնասիրության երեք մակարդակ՝ միջազգային, հանրապետական և տեղական: Աշխատանքում մանրամասնորեն վերլուծվել են առավելապես միջազգային և հանրապետական մակարդակները, որով փորձ է կատարվել ապահովել «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» գիտական և ռազմավարական ընտրու-

թյուն: Այս մակարդակների ուսումնասիրության խնդիրների բացահայտման համար նախընտրվել է 1:500000 մասշտաբի տեղեկատվական մանրամասնությունը:

Ուսումնասիրության աշխարհագրական մոդելն ընդգրկում է հետևյալ փուլերը.

I փուլ. Երկրի ներուժի բազայի ստեղծում: Ներառում է տեղեկատվական բազայի ստեղծումը և քարտեզների կազմումը:

II փուլ. «Աճի կենտրոնների» փարաձբային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում: Նպատակ ունի բացահայտել երկրի մրցակցային տարածքները, առկա և հնարավոր «աճի կենտրոնները»:

III փուլ. «Չարգացման բևեռների» գործառնության փարաձբային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում: Նպատակ ունի բացահայտել երկրի տնտեսության կառուցվածքում ձևավորված «զարգացման բևեռները», առաջարկել նոր «զարգացման բևեռներ», և որպես վերջնական արդյունք առաջարկել տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխման և տարածքային կազմակերպման նոր տարբերակ:

IV. փուլ. Եզրակացությունների և ընդհանրացումների կապարում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԸՍՏ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա իրականացվող ռեգիոնալ զարգացումն ակնկալում է գործառնության հենքի՝ «զարգացման բևեռների» և տարածական հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծում և դրանց աջակցություն: ՀՀ «զարգացման բևեռների», «աճի կենտրոնների» բացահայտման ուսումնասիրություններն իրականացվել են մշակված մոդելի համաձայն:

I փուլ. Երկրի ներուժի բազայի ստեղծում: Կատարվել է ՀՀ բնաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական ներուժերի վերլուծություն և գնահատում: ԱՏՀ-ի կիրառմամբ ստեղծվել է ներուժերի տեղեկատվական բազա, կազմվել են վերլուծական քարտեզներ:

II փուլ. «Աճի կենտրոնների» փարաձբային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում: Բացահայտվել են ՀՀ տարաբնակեցման առանձնահատկությունները և «աճի կենտրոնները»:

Համաշխարհային մակարդակում, տարբերակել ենք ՀՀ մրցակցային առավելություններով տարածքները, որոնք են մայրաքաղաքն իր մերձքաղաքային գոտով, Արարատյան խտաբնակ տարածաշրջանը, Սևանի ռելիեֆային գոտին, արդյունաբերական շրջանները, մերձսահմանային Մեղրու և Այրումի տարածքները: Հիմք է ընդունվել Ն. Բ. Զուբարևիչի մրցակցային առավելություններով տարածքների տարբերակման մոտեցումները (քարտեզ 3):

Հանրապետական մակարդակում, բացահայտել ենք ՀՀ առկա՝ ձևավորված «աճի կենտրոնները», դրանց ազդեցության դաշտերն և այդ դաշտերից դուրս մնացած տարածքները: Խնդրի իրականացման համար ուսումնասիրությունները կատարվել են 3 կտրվածքով՝

1. մարաքաղաքի, **2.** մարզկենտրոնների, **3.** բոլոր քաղաքների,

և 2 ուղղությամբ՝

1. որոշվել են դրանց մաքսչեղիությունը


• ըստ ճանապարհային հեռավորության (կմ), (**ա**)

• ըստ ժամանակային ծախսերի (րոպե, ժամ), (**բ**)


2. որոշվել են դրանց ազդեցության գոտիները (գ) (քարտեզներ 1.1 ա, բ, գ, 1.2 ա, բ, գ, 1.3 ա, բ, գ):

Քարտեզներում ակնառու կերպով երևում են կենտրոնների ազդեցության գոտիները, թույլ ազդեցության գոտիները և ազդեցության դաշտից դուրս մնացած տարածքները:


ՄԱՅՐԱՔԱՂԱՔ



Քարտեզ 1.1 ա ըստ ճանապարհային հեռավորության




Քարտեզ 1.1 բ ըստ ժամանակային ծախսերի




Քարտեզ 1.1 գ ըստ աղեցության ներուժի


ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆՆԵՐ



Քարտեզ 1.2 ա ըստ ճանապարհային հեռավորության




Քարտեզ 1.2 բ ըստ ժամանակային ծախսերի



Քարտեզ 1.2 գ ըստ աղեցության ներուժի


ՀՀ ՔԱՂԱՔՆԵՐ



Քարտեզ 1.3 ա ըստ ճանապարհային հեռավորության




Քարտեզ 1.3 բ ըստ ժամանակային ծախսերի



Քարտեզ 1.3 գ ըստ աղեցության ներուժի

Թույլ ազդեցության կամ ազդեցությունից դուրս մնացած գոտիների յուրացման հնարավորությունների գնահատման համար, կատարվել է մատչելիության (նաև ազդեցության դաշտի) քարտեզի և ռելիեֆի որակական գնահատման քարտեզի համադրում (քարտեզ 2):



Քարտեզ 2. ՀՀ բնակավայրերի հեռավորությունը քաղաքներից

Արդյունքում, երբ տարբերակել ենք նաև յուրացման համար դժվարանատչելի և տնտեսական յուրացման համար անբարենպաստ տարածքները, հստակեցվել են քաղաք-կենտրոնների թույլ ազդեցության այն գոտիները, որոնք ունեն յուրացման ու նոր կենտրոնների ձևավորման անհրաժեշտություն: Այդպիսի տարածքներ են Շիրակի մարզի հյուսիսային և հարավային, Արագածոտնի և Արմավիրի արևմտյան, Արարատի հարավարևելյան, Գեղարքունիքի արևելյան, Տավուշի կենտրոնական և հարավային, Վայոց ձորի և Սյունիքի լեռնային շրջանները: Վերոհիշյալ գոտիներում նոր կենտրոնները կարող են ընտրվել և հիմնավորվել տեղական մանրակրկիտ հետազոտությունների արդյունքում (տեղական մակարդակ): Այդպիսիք կարող են լինել Աշոցքը, Բավրան, Գառնին, Ելփինը և այլն (քարտեզ 2):

ՀՀ տարաբնակեցման և «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունները բացահայտվել են նաև ըստ քաղաքների կարգերի, մարդաշատության փոփոխությունների, ճանապարհներից բնակավայրերի հեռավորության գնահատումների:

III փուլ. «Զարգացման բևեռների» գործառութատարածքային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում: Աշխատանքում կարևորել ենք ՀՀ տնտեսության մրցակցային առավելություններով ռազմավարական ուղղությունների ընտրությունը: Ռազմավարական գերակա ճյուղերն այն հենասյուներն են, որոնց վրա կկառուցվի Հայաստանի ազգային ոռոջ տնտեսությունը: Դրանց տարբերակման համար վերլուծվել են ՀՀ տնտեսական աճի դինամիկ փոփոխությունները, կառուցվածքային առանձնահատկությունները, որում առավելապես կարևորվել են արդյունաբերությանը, ապա վերամշակող արդյունաբերությանը նվիրված ուսումնասիրությունները: Այսօր վերամշակող արդյունաբերության կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն սննդամթերքի արտադրությունը, որին բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերության ՀՆԱ-ի 46.6%-ը (2015 թ.), հիմնային մետաղների արտադրությունը՝ 18.2%: Սրանք միասին տալիս են վերամշակող արդյունաբերության արտադրանքի 64.8%-ը:

ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքում «զարգացման բևեռների» տարբերակման ու բացահայտման համար կատարվել է արտադրությունների բալային գնահատում՝ հենվելով վիճակագրական տվյալների 7 ցուցանիշների վրա: Ընտրվել է հինգ բալանոց համակարգը: Բալային գնահատման սահմանային եզրույթների որոշման համար հիմք են ծառայել ցուցանիշների նվազագույն և առավելագույն տվյալները, դրանց տարբերության մեծությունը, ցուցանիշների դրսևորման առանձնահատկությունները: Հիմք ընդունելով մշակված բալային գնահատման սանդղակը՝ վերամշակող արդյունաբերության յուրաքանչյուր արտադրության համար հաշվարկվել են բալային գնահատումների հանրագումարային, ապա միջինացված համաթվերը, ըստ որոնց էլ տարբերակվել են առաջատար արտադրությունները և առանձնացրել «զարգացման բևեռների» հետևյալ խմբերը.

- 1. Զևավորված ավանդական բևեռներ** - գունավոր մեքալուրգիա, շինանյութերի արդյունաբերություն, սննդի արդյունաբերություն :
- 2. Նոր ձևավորող և արագընթաց տեմպեր ունեցող բևեռներ** - թեթև արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն (դեղագործական արտադրանքի արտադրություն, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն), մեքենաշինություն (էլեկտրական սարքավորանքի արտադրություն, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն), ոսկերչություն և ակնագործություն, զբոսաշրջություն:
- 3. Տեղական նշանակության բևեռներ** - պոլիգրաֆիական գործունեություն, թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն, բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն, կահույքի արտադրություն:
- 4. Հեռանկարային, սեփական սոցիալ-տնտեսական ներուժ ունեցող բևեռներ** - ճշգրիտ մեքենաշինության և էլեկտրոնային արտադրություններ, ավտոմոբիլաշինություն, կրթություն, գիտություն, առողջապահություն, առևտուր, հեռահաղորդակցություն:

IV. փուլ. Եզրակացությունների և ընդհանրացումների կատարում: Բացահայտվել է ՀՀ տնտեսության տարածագործառութային առկա հենքի առանձնահատկությունները, տարբերակվել արդեն իսկ ձևավորված «աճի կենտրոններն» իրենց «զարգացման բևեռներով» և առաջարկվել նոր հենքի տարբերակ՝ նոր «աճի կենտրոններ» իրենց «զարգացման բևեռներով»:

Առկա կենտրոններն են (քարտեզ 3).

- մայրաքաղաքը՝ բազմագործառույթային կենտրոն - **Երևան**
- բազմագործառույթային խոշոր քաղաքները - **Գյումրի, Վանաձոր, Հրազդան**
- լեռնահանքային արդյունաբերության կենտրոնները - **Ալավերդի, Կապան, Քաջարան, Ագարակ, Սոթք, Մեղրաձոր, Արարատ**
- բարենպաստ ԱԴ-ով կենտրոնները - **Մասիս, Մեղրի**
- զբոսաշրջային կենտրոնները - **Վաղարշապատ, Ծաղկաձոր, Դիլիջան, Իջևան, Գորիս, Ջերմուկ**
- ԱՏԳ-ը «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքի գյուղատնտեսական ուղղվածության առևտրային տնտեսական գոտին, Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ և Մարս գործարանի տարածքի տեխնոպարկը, Գյումրու տեխնոպարկը:

Նպատակահարմար է՝ (քարտեզ 3)

• ՀՀ-ում բարենպաստ աշխարհագրական դիրք ունեցող տարածքներում ստեղծել առևտրային ազատ տնտեսական գոտիներ: Այդպիսիք կարող են կլինեն **Մասիսը, Մեղրին, Քաղարաջենը, Բավրան:**

• ՀՀ արդյունաբերական շրջաններում ստեղծել տնտեսական զարգացման մեծ ներուժ ունեցող արդյունաբերաարտահանման գոտիներ: Այդպիսիք կարող են լինել **Նոր Հաճնում** ադամանդագործության բորսայի կառուցումը, **Ալավերդիում՝** գունավոր մետալուրգիայի բազայի վրա մեքենաշինության և քիմիական արդյունաբերության, **Հրազդանում և Չարենցավանում՝** մեքենաշինական, թեթև արդյունաբերության որոշ ճյուղերի ստեղծումը:

• Մայրաքաղաքի շրջակայքում և խոշոր քաղաքներում ստեղծել տեխնոպարկեր, քանի որ այս գոտում է կենտրոնացած հանրապետության հիմնական գիտատեխնիկական ներուժը: Այդպիսին կարող են լինել **Աշտարակի** տեխնոպարկը (տեխնոպարկի ստեղծման ծրագիրը նախորդ տարիներին մշակվել է, սակայն այժմ չի գործում), **Աբովյանի** տեխնոպարկը՝ մեքենաշինական էլեկտրոնային սարքաշինական արտադրությունների զարգացմամբ:

• Արարատյան դաշտում ստեղծել **Մեծամորի, Վաղարշապատի, Արաջապատի**, իսկ Վալոց ձորում՝ **Եղեգնաձորի** ագրոարդյունաբերական համալիրները, սննդի արդյունաբերության արտադրատեսակների, գյուղատնտեսական մեքենաշինության և սարքաշինության զարգացմամբ: Նշված տարածքներում առկա են սննդի մի շարք արտադրատեսակների (մասնավորապես՝ գինու-կոնյակի և պահածոների) համար կլաստերների ստեղծման նախապայմաններ, որոնց ստեղծմամբ կմեծանա շուկայական մրցունակությունը:

• Ռեկրեացիոն ռեսուրսներով հարուստ շրջաններում նպատաստել **Սևանի, Մարտունու, Արմավիրի, Ջերմուկի, Գորիսի** զբոսաշրջային կենտրոնների ձևավորման և զարգացմանը:

• Շիրակի մարզի հյուսիսային և հարավային, Տավուշի՝ կենտրոնական և հարավային, Գեղարքունիքի՝ արևելյան, Արագածոտնի և Արմավիրի՝ արևմտյան, Արարատի՝ հարավ-արևելյան, Վայոց ձորի՝ հյուսիսային, Ջանգեզուրի՝ հյուսիսային հատվածներում կարևորել տեղական կամ տարածաշրջանային կենտրոնների զարգացումը: Այդպիսիք կարող են լինել **Աշոցքը, Քարակերպը, Գառնին, Ելփինը** և այլն:

Նպատակահարմար է՝

• Մեր մայրաքաղաքային գոտու արևելյան և հարավարևելյան թերզարգացած գոտում, **դեպի Սևանի ավազան**, ճանապարհի կառուցումը, որի դեպքում հնարավոր կլինի նպաստել մերձմայրաքաղաքային գոտու և Սևանի արևմտյան տարածաշրջանի արագընթաց զարգացմանը, և երկրորդ՝ այն կունենա ռազմավարական նշանակություն Լեռնային Ղարաբաղի հետ կարճագույն կապի տեսանկյունից: Իսկ քանի որ տարածքում առկա են ռեկրեացիոն ռեսուրսներ, հետևաբար այստեղ ձևավորվող կենտրոնները նպատակահարմար են ունենան զբոսաշրջային մասնագիտացում:



Քարտեզ 3. ՀՀ «աճի կենտրոններ»

• Թույլ զարգացած տարածքներում ճանապարհային ցանցի բարելավումը և կառուցումը, հատկապես Տավուշում՝ **Իջևան-Տավուր**, իսկ Գեղարքունիքի մարզում՝ **Ծովագյուղ-Աղբերք-Ճամբարակ** ուղղություններով, որոնք կլուծեն բնակավայրերի մատչելիության հարցերը:

ՀՀ-ում տնտեսության և տարաբնակեցման տարածագործառույթային կազմակերպման համար կարևոր նշանակություն կունենա «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի» և «Հայաստանի հարավային երկաթուղի» ներդրումային ծրագրերի իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտության հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը բացատրում է տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Այն իր հիմքում ունենալով «աճի կենտրոն» և «զարգացման բևեռ» հասկացությունները, ակնկալում է ռեգիոնալ զարգացման տարածական և գործառույթային ուսումնասիրություն և որպես վերջնական արդյունք՝ դրանց սինթեզ: Ըստ իս, հայեցակարգը, համալիր և գիտական հետազոտություն կարող է ապահովել միայն մեր կողմից ընդհանրացված 5 պայմանների դեպքում:

2. «Աճի կենտրոնների» ձևավորման, զարգացման, ազդեցության դաշտի աշխարհագրական ընդարձակման ու ինտենսիվության մեծացման գործընթացում որոշիչ դեր ունի է տրանսպորտային և սոցիալ-արտադրական ենթակառուցվածքների միասնական ցանցի ստեղծումը (հորիզոնական կապեր), իսկ «զարգացման բևեռների» բազմապատկիչի արդյունքի մեծացման գործընթացում՝ հումքաէներգետիկ, սպասարկող և օժանդակ արտադրական կապերի ստեղծումը (ուղղահայաց կապեր):

3. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը համահունչ է հասարակության տարածքային կազմակերպման օրենքներին ու օրինաչափություններին: Այն բացահայտում է տարածքի, «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» փուլաէվոլյուցիոն զարգացման շարժընթացը, հնարավորություն է ընձեռում՝ անել կանխատեսումներ, իրականացնել՝ հիմնավոր կառավարում:

4. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ապահովում է երկրի մրցունակությունն ու տարածքի համաչափ զարգացումը:

5. Երկրների ռեգիոնալ քաղաքականության հիմքում կարող է դրվել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը: Դրա շնորհիվ ռեգիոնալ քաղաքականությունն ընտրում է «օջախային» և ոչ թե ցրված աջակցության ծրագրեր՝ դրանք դարձնելով բևեռներ և կենտրոններ: Վերջիններս զարգացման ավելի հասուն փուլերում, արդեն իսկ ինքնազարգացման ինտեգրայով, ապահովում են երկրի տնտեսական զարգացում:

6. ***Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ քաղաքականության համար որոշիչ են գործառույթային («զարգացման բևեռների») և տարածքային («աճի կենտրոնների») հենքերի ստեղծումը և դրանց տարբերակված աջակցությունը:***

7. Կախված կենտրոն-ծայրամաս համակարգում երկրների գրաված դիրքից, զարգացման մակարդակից, տեղային առանձնահատկություններից, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի սկզբունքների վրա կառուցված ռեգիոնալ քաղաքականությունն ունի տարածքային և գործառույթային կազմակերպման ակնառու տարբերություններ, որոնք արտահայտվում են մեր կողմից տարբերակված չորս առանձնահատկություններով:

8. Առանձին երկրի ազգային տնտեսության տարածագործառույթային ուսումնասիրությունները նպատակահարմար է իրականացնել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրույթների հիման վրա մշակված մոդելով:

9. ՀՀ տնտեսության տարածքային և գործառույթային բարեփոխումների իրականացման համար գիտատեսական հիմք կարող է հանդիսանալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը:

10. ՀՀ տնտեսական զարգացման և մրցունակության ապահովման համար կարևոր է տնտեսության մրցակցային դաշտի ստեղծումը, մրցակցային առավելություններով արտադրական հենքի և տարածական ցանցի տարածագործառույթային կազմակերպումը:

11. ՀՀ տնտեսության զարգացման գործընթացում, որպես մրցակցային տարածագործառության միջուկներ, կարևոր դեր կարող են ունենալ ԱՏԳ-երի, տեխնոպարկերի և կլաստերների ստեղծումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախընտրելի է ՀՀ ռեգիոնալ քաղաքականության հիմքում դրվի աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը՝ հաշվի առնելով տարածքային և գործառության կազմակերպման ռեգիոնալ առանձնահատկություններն ու տարբերությունները:

2. ՀՀ-ում տնտեսության տարածագործառության կազմակերպման համար կարևորել գործառության *հենքի՝ «զարգացման բևեռների»* և *տարածքային հենքի՝ «աճի կենտրոններ»* ստեղծումը և դրանց փարբերակված աջակցությունը:

3. ՀՀ տնտեսության տարածքային կազմակերպման գործընթացում կարևորել նաև ճանապարհների բարելավումների իրականացումը:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հետևյալ աշխատանքները.

1. Ղամբարյան Գ., Աճի բևեռ և կենտրոն հասկացությունը աշխարհագրական պատկերացմամբ, Լ. Վախչայանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 68-77:

2. Гамбарян Г. Г., Айриянц А.А., Теория “полюсов и центров роста” и региональная политика; “Modern problems of geography” proceedings of the conference: Dedicated to the 80th Anniversary Since the Foundation of Vakhushti Bagrationi Institute of Geography: collected papers new series N 5(84), Tbilisi, 2013, 223-226 p.

3. Ղամբարյան Գ., Հակոբյան Լ., ՀՀ զբոսաշրջության զարգացման առանձնահատկություններն ու միտումները, Տարեգիրք 2012, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, 2013, էջ 473-479:

4. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման, Տարեգիրք 2013, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, 2014, էջ 252-262:

5. Гамбарян Г. Г., Айриянц А. А., Теоретические основы региональной экономической политики; «Modern problems of geography and anthropology» proceedings of International Conference: Dedicated to the 140th Anniversary of Academician Alexandre Javakhishvili, Tbilisi, 2015, 324-327p.

6. Гамбарян Г. Г., Законы и закономерности территориальной организации общества (ТОО), “Modern problems of geography and anthropology” proceedings of International Conference: Dedicated to the 140th Anniversary of Academician Alexandre Javakhishvili, Tbilisi, 2015, 331-334p.

7. Ղամբարյան Գ., ՀՀ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրության հարցի շուրջ, «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 105-109:

8. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., Զբոսաշրջությունը որպես «աճի բևեռների» և «աճի կենտրոնների» զարգացման հենք (ՀՀ օրինակով), «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 316-318:

9. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., Երկրների մրցունակության տեսամեթոդական հարցի շուրջ, «Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում» գիտաժողովի նյութեր, Եղեգնաձոր, 2015, էջ 222-232:

ГАМБАРЯН ГОАР ГУРГЕНОВНА **КОНЦЕПЦИЯ «ПОЛЮСАОВ И ЦЕНТРОВ РОСТА» В РЕГИОНАЛЬНОМ РАЗВИТИИ РА** **РЕЗЮМЕ**

После провозглашения независимости в Республике Армения произошли общественные, социально-экономические и политические изменения, приведшие к необходимости теоретического и методологического обновления социально-экономической географии. Сегодня армянская географическая наука приобщается к теоретической и методологической сфере мировой географической науки и стремится применить передовые идеи и теории в процессе регионального развития РА.

На Западе широко распространена концепция «полюсов и центров роста», которая объясняет процессы пространственной централизации и территориальной организации экономической деятельности и предлагает в условиях рыночной экономики конструктивные решения проблем регионального развития. Концепция разработана французским экономистом Франсуа Перу. Сегодня концепция лежит в основе государственного управления и региональной экономической политики большинства стран мира, в частности стран Западной Европы.

Целью диссертации является выявление специфики применения концепции в процессе регионального развития РА. Для достижения нашей цели были установлены следующие задачи:

1. уточнить и обобщить теоретические подходы и принципы концепции;
2. прояснить особенности государственного управления и региональной экономической политики, построенные на теоретических принципах концепции, и выявить их региональные различия;
3. уточнить особенности исследования отраслевой и территориальной организации экономики стран в соответствии с теоретическими принципами концепции; разработать модель исследования;
4. в соответствии с разработанной моделью провести исследования на примере РА.

В рамках перечисленных задач проводились всесторонние исследования и анализы, на основании которых были сделаны следующие выводы и заключения.

1. Концепция «полюсов и центров роста» объясняет особенности отраслевой и территориальной организации экономики. Концепция имеет в своей основе два ключевых понятия («центр роста» и «полюс развития») и предполагает географическое (пространственное) и функциональное исследование регионального развития и, как конечный результат, их синтез;
2. В процессе формирования, развития, географического расширения и увеличения интенсивности влияния поля «центров роста», важно создание единой сети дорожной и социально-производственной инфраструктуры (горизонтальные связи), а в процессе умножения мультипликационного эффекта «полюсов развития» важно создание материально-энергетических, обслуживающих, вспомогательных производственных связей (вертикальные связи).

3. Концепция «полюсов и центров роста» в своей теоретической основе соответствует законам и закономерностям территориальной организации общества. В результате исследований выяснились динамические изменения стадийно-эволюционного развития территории, «центров роста», «полюсов развития», теоретическое знание которых дает возможность делать прогнозы и осуществлять обоснованное управление.
4. Теоретически обосновано вложение концепции «полюсов и центров роста» в основу региональной политики стран. Региональная политика, основанная на этой концепции, выбирает «очаговые», а не “разбросанные” программы поддержки отраслей и центров производства, превращая их в «центры роста» и «полюса развития», которые впоследствии, уже по инерции саморазвития, могут обеспечить экономическое развитие страны. По сути, для региональной политики, построенной на теоретических принципах концепции «полюсов и центров роста», важно создание функциональной («полюсов развития») и территориальной («центров роста») основы и их дифференцированная поддержка.
5. Региональная политика, основанная на этой концепции, в зависимости от места стран в системе взаимодействия центр-периферия и уровня их развития, имеет функциональные и территориальные организационные различия. Нами выделены четыре разновидности особенностей.
6. Территориальные и функциональные исследования национальной экономики целесообразно осуществлять согласно разработанной нами модели, руководствуясь теоретическими положениями концепции.

В соответствии с предложенной моделью, на примере Армении были проведены исследования, составлены карты и сделаны выводы и предложения.

Результаты исследования обеспечивают научную основу для региональной экономической политики, регионального развития, отраслевой и территориальной организации экономики Армении. Результаты исследования могут быть использованы Министерством экономики Армении, Министерством территориального управления, Министерством международной экономической интеграции и реформ.

GOHAR GURGEN GHAMBARYAN
THE CONCEPT OF "GROWTH POLES AND GROWTH CENTRES" IN REGIONAL
DEVELOPMENT OF RA
SUMMARY

In the Republic of Armenia after independence, the ensuing social, economic and political changes represent a new social order for the geography and the science is need theoretical and methodological renewal. Today Armenian geographical science attached to the theoretical and methodological field of world geography, and seeks to apply the advanced ideas and theories, passed historical expertise, for the Regional Development of Armenia.

In the West is widespread the concept of "poles and growth centres", which explains the processes of spatial centralization and territorial organization of economic activity and offers constructive solutions to problems of regional development in the market economy. The concept is developed by the French economist Francois Perroux. Today, the concept is put on the basis of public administration and regional economic policy in most countries of the world, particularly in the countries of Western Europe.

The aim of the dissertation is to identify the specifics of applying the concept in the process of regional development of the Republic of Armenia. For our purpose were set the following tasks:

1. To clarify and summarize the theoretical approaches and the principles of the concept,
2. Explain the features of public administration and regional economic policy is built on the theoretical principles of the concept, and discover their regional differences.
3. To clarify the features of research in the sectoral and territorial organization of economy of the countries in accordance with the theoretical principles of the concept. To develop the research model.
4. According to the developed model to conduct research on the example of RA.

Around these problems, we conduct comprehensive researches and analysis, on the basis of which has made the following findings and conclusions.

1. The concept of "poles and growth centres" explains the features of sectoral and territorial organization of the economy. The concept is having two key concepts ("growth center" and "pole of development"), it is assumed geographic (spatial) and functional studies of regional development and as an end result-their synthesis:
2. In the process of formation, development, geographic expansion and increased intensity of influence of the field of "growth centres", is important development of an integrated network of road and social and productive infrastructure (horizontal communication), and in the multiplication process multiplicaciones effect "poles of development" important to create materialsmanagement serving, auxiliary production linkages (vertical connection):
3. The concept of "poles and growth centres" in its theoretical basis complies with the laws and regularities of territorial organization of society. The studies revealed dynamic changes stage of the evolutionary development of the territory, "growth", "poles of development", theoretical knowledge which enables us to make predictions and to exercise reasonable control.
4. Theoretically justified on the basis of regional policies of the countries was based on the concept of "poles and growth centres". Regional policy is based on this theory, chooses "focal" and not scattered support program, turning them into poles and centres in more Mature stages of development, by the inertia of self-development, can ensure the economic development of the country: In fact, the regional policy is built on the theoretical basis of the concept of "poles and growth centres", it is important to create a functional ("poles of development") and territorial ("growth") basis, and their differentiated support.
5. Regional policy based on this concept, depending on the location of countries in the system vzaimodejtvii center-periphery, of their level of development, their local characteristics, has a functional organizational and territorial obvious differences: Differences are expressed we have identified four features.
6. Territorial and functional studies of the national economy it is appropriate that we have developed according to the model based theoretical concepts.

According to the model, on the example of Armenia, conducted research, drafted maps and conclusions and suggestions.

The research results provide a scientific basis for regional economic policy; regional development; sectoral and territorial organization of economy of Armenia. The results of the study can be used by ministries of Armenia's Economy and Territorial administration, International economic integration and reforms.